տեսադիտական ուսմունքն աւարտե-
լով Հայրենիք վերադարձած են. Իսկ
վերջին երկուքն տակաւին Զուիցերի-
ոյ մէջ դաստիարակութեան վսեմ
պաշտօնի համար կը պատրաստուին,
զանազան ուսումնական ակումբներու
մէջ գտնուելով և տեսական ու փոր-
ձառական կրթութեանց մէջ հմտա-
նալով:

---

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամսոյ 6ին Յունաց պատրիարքը
և Ռուսաց Հիւպատոսը քաղաքս ժա-
մանեցին, որ Ն. Բ. Նիկոլայ դքսին
ուղեկից եղած էին մինչև Յոպպէ:
Նոյն գիշերը Յունաց Ս. Պատրիարքը
տեղւոյս Կառավարիչը իւր քով կան-
չելով բաւական երկար խօսակցելէն
վերջը իւր անձին պահպանութեանը
համար ղօլիէնէլ խնդրեց, որպէս զի
պատրիարքարանի դուռը կենան և մի-
աբանութեան մուտքն արգիլեն, վախ-
նալով որ չըլլայ թէ իրեն վնաս մի հաս-
ցընեն. քանզի Կուլլուրները բանադ-
րելու մասին դեռ որոշ պատասխան
տուած չէր՝ պատճառ բռնելով Ար-
քայազուն Դքսին գալուստը:

—7ին գիշերը Ս. Պատրիարքը տե-
ղացի Նապլուսցի, Յոպպէցի և Կազ-
զէցի ութսուն հոգիի չափ հետն ա-
ռած և զապթիէներով շրջապատեալ
Կառավարչին գնաց եւ յայտնեց որ
Միաբանութիւնը իրեն ներհակ է. բայց
ժողովուրդը զինքը չի թողուր, ներկայ
գտնուող ութսուն հոգին ալ միաբե-
րան կ'աղաղակէին թէ, "Մենք մեր
Պատրիարքէն չեմք անցնիր ,, Ս. Պատ-
րիարքը յայտնեց նաև թէ ինքը իւր փո-
խանորդն ու Թարգմանը պաշտօնէ
դադրեցուցած է, և թէ կը հաստատէ
այն պաշտօններուն Խալիլ–Այուպ
անուն անձը, (որ տեղւոյս Կառավա-
րութեան Արաբերէն Մուհէրրիր միւ-
տիւրն է.) յայտարարեց նաև որ այն
երկու գլխաւոր հակառակորդները
պէտք են աքսորուին:

Այս խնդրոյ վերայ երկար խօսակ-
ցելէն վերջը Ս. Պատրիարքը մեկնե-
ցաւ: Քիչ մը յետոյ Ռուսաց Հիւ-
պատոսը կառավարչին ներկայանալով
ըսաւ որ պատրիարքին ապահովութե
համար պէտք է հսկողութիւն ընել,
ապա թէ ոչ պատահած վնասուն զին-
քը պատասխանատու կը ճանչնայ իւ-
րեւ քաղաքիս Կառավարիչ և բարե-
կարգութեան հսկող: Ժամէ մը յետոյ
վսեմ. Կառավարիչը Յոյն միաբանութե-
նէն լուր զրկեց և Պատրիարքին հակառա-
կող Թարգմանը և Բենիամին–Իօանն-
ակս անուն վարդապետը կանչեց,
բայց փոխան այն երկու մարդուն՝
ամբողջ միաբանութիւնը հանդերձ
փոխանորդ եպիսկոպոսով, ընդ ամենը
130 հոգի կառավարչին կը ներկայա-
նան ըսելով թէ մեք ամենքնիս իրա-
մէ չենք զատուիր. Կառավարիչն խա-
ղաղութական միջոցներ բռնելով կու-
զէր համոզել, յորդորել և խրատել,
որ հանդարտին և իրենց պատրիար-
քին հետ հաշտուին և անոր հնազան-
դին, բայց միաբանք առանց համոզ-
ուելու՝ ըսին, թէ այսօրուանէ մեք
զայն ոչ պատրիարք, ոչ հայր և ոչ իսկ
քրիստոնեայ կը ճանչնամք, նորա ա-
նունը պատարագի մէջ յիշատակելէ
դադրած եմք. քանզի նա այնուհետև
անհաւատ է և այլն և այլն: Վսեմ
Կառավարիչը տեսնելով հաշտութեան
անկարելութիւնը՝ յայտնեց որ եթէ
իրենք զայն Պատրիարք չեն ճանաչեր՝

digitised by A.R.A.R.@

ինքը կը ճանչնայ, քանի որ հրովարտակ ունի. և գտանուլով փոխանորդին ու Թարգմանին կ՚ըսէ. Պատրիարքն ըն- Ձեզ պաշտօնէ դադրեցուց և ձեր տեղն ուրիշը նշանակեց, դուք այսուհետև ոչ փոխանորդ և ոչ ալ Թարգման էք. —Հոգ չէ որ դուք մեր պաշտօնակալութիւնը չէք ճանչնար. հերիք է որ միաբանութիւնը կը ճանչնայ որ ահա ներկայ է կարող ես հարցանել. Իսկ միաբանութիւնը առանց իսկ հարցման սպասելու պատասխանեցին, թէ սա մեր Թարգմանն և սա մեր փոխանորդն ՚է. Այս հեռագիր մը ներկայացուցին կառավարչին, զոր հանդերձ պատրիարքին տուածովը իսկոյն հեռագրեց բարձրագոյն դուռը. Նոյն գիշեր Յոյն Միաբանութիւնը ամեն տեղ հեռագրով իմացուցին թէ այսուհետեւ Քերիլոս Պատրիարքը պէտք է յիշատակելէ դադարին.

—10ին. երեկոյեան ժամը մէկին Կառավարիչը Պատրիարքին կամօքը Յունաց վանքին մէջ հարիւրի չափ զապթիէ թողելով դուռը գոցել տըւաւ և բանալիները իրեն յանձնեց. Թարգմանն ու Բենիամինը կանչեց արտաքսելու համար, որք առանց ընդդիմութեան գացին, ընկերակցութեամբ փոխանորդ եպիսկոպոսին. Կառավարիչը առանձին սենեակ մը դնել հրամայեց, դուռը զապթիէներ կանգնեցնելով. վեց ժամէն յետոյ եպիսկոպոսին լուր ղրկեց որ մեկնի, բայց նա յայտնեց որ առանց իւր ընկերներուն չէ կարող մեկնիլ. Նոյն գիշերը վանքին բոլորտիքը և Յունաց փողոցները պահապաններով շրջապատուած էր. Բեթղեհէմի Մետրոպոլիտը ժողովրդեան Թախանձանքէն ստիպեալ նոյն գիշեր ժամը 9ին քաղաքս հասաւ և Պատրիարքին հետ հաշտուեցաւ.

—11ին, Յոյն միաբանութիւնը Կառավարչէն խնդրեց որ վանքին դուռը բացուի. փոքր դուռը միայն բացուեցաւ և զապթիէներն ելան, բայց ՚ի երկու հատէն որ պահպանութեան համար հոն մնացին. Նոյն օրը ժամը 8ին Պատրիարքը լուր կը ղրկէ մի քանի վարդապետաց, որ գան և իրեն հետ սուրբ Յարութիւն երթան, բայց բընաւ մէկը չեկաւ. Իսկ Պատրիարքը բռնի երկու վարդապետ բերել տուաւ որոց մէկն զինքը չի ճանչնալը յայտնեց և միւսը երկիւղէն պատասխան մի չի կրցաւ տալ և երկու ապտակ ուտելով արտաքսեցաւ. ապա Պատրիարքը տեղացի քահանաներու և զապթիէներու ընկերութեամբ գնաց սուրբ Յարութիւն ուր կը գտնուէր նաև Ռուսաց Հիւպատոսը. Սուրբ Յարութեան Տեսուչը ըստ սովորութեան չի դիմաւորեց զինքը ժամերգութեան ատեն միաբան միանգամ չի կար.

—12ին Առաւօտ Պատրիարքը նոյն անձանց և Հելլենացւոց Հիւպատոսին ընկերութեամբ եւ Յոյն ժողովրդոց մեծ բազմութեամբ նորէն սուրբ Յարութիւն գնաց, և պատարագի զըգեստ ուզելու համար Տեսչին լուր ղրկեց, բայց պատասխան անգամ չըստանալով պատրիարքարանէն բերել տուաւ, ժամարարն ինքն էր եւ աբարողութիւնը Յունարէն և Արաբերէն լեզուաւ կատարուեցաւ. Միաբանք օտար տէրութեանց հիւպատոսաց յայտնելով իրենց վիճակը, վարդապետաց բանտարկութիւնը և վանքին մէջ զապթիէ լինելը, օգնութիւն խնդրեցին.

—13ին Ռուսիոյ Հիւպատոսին միջամտութեամբ վարդապետները բանտէն ազատեցան և վանուց դռները կեցող զապթիէներն ետ կանչուեցան.

—14ին Կառավարչին ՚Թախանձանօք վանքի դրան բանալիները ետ ղրկեց

digitised by A.R.A.R.@

Պատրիարքը: —16 ին միաբանութիւնը Պօլսոյ Պատրիարքարանէն հեռագիր մի ստացաւ, որով կ՚իմացնէր թէ սուրբ հանգիստ և ապահով թող լինին. նոյն օրը Պատրիարքը քանի մի մեծամեծաց միջամտութեամբ հաշտութիւն ուզեց. բայց անհնար եղաւ, քանզի միաբանութիւնը բաց ՚ի Գուլղարայ բանադրութեան խնդիրէն (որուն կամակից չէ Պատրիարքը) կը պահանջէ նաև 27 տարուան հաշիւ, զոր կ՚ըսուի թէ Պատրիարքը տալ չէ ուզեր: —17 ին Հայր Ներսէսին երկու ուրիշ վարդապետք, Կառավարութեան կողմէն տրուած ձիաւոր զօրքերու հսկողութեամբ Յոպպէ իջան և Աւստրիոյ շոգենաւով Պօլիս մեկնեցան ընդդէմ կամաց իրենց Պատրիարքին. —Նոյն օրը Պատրիարքը Երուսաղէմ Դեսպանին բողոքեց իւր հիւպատոսին ըրած միջամտութեան համար

—19 ին Ս. Պատրիարքը վարդապետ մի ղրկեց իւր կողմէն Յոպպէ Տեսչութեան պաշտօնին. որ 20 ին հոն հասնելով տեղացի Յոյն ժողովրդեան հետ վանքը կը մտնէ, ժողովուրդը նախկին տեսչին վրայ կը յարձակի. Կառավարութեան կողմէն գայմագամը ոստիկանութեան զինուորներով անկարգութեան առաջքը կ՚առնու. յետոյ Կառավարչէն ստացած հեռագրոյն համեմատ կ՚ըստիպէ ըզնախկին տեսուչը որ ամէն բան նոր եկողին յանձնէ, և նա ալ կը յանձնէ. հետևեալ օրը պատարագի ժամանակ ժողովուրդը նորէն կը յուզուի և նախկին տեսչին վրայ կը յարձակի գոգցես զայն սպաննելու նպատակաւ, և զինուորաց միջոցաւ վերստին խաղաղցաւ. և դուրս ՚ելնելով սկսաւ աղաղակել, "Կեցցէ՛ արքայ, պակսի՛ն վարդապետք." ժողովուրդը այսպէս սաստիկ յուզուած աղմուկներ հանելէ վերջ կը խաղաղի գայմագամին բռնած ազդու միջոցներով:

—19 ին կէս գիշերէն երեք ժամ յետոյ վախճանեցաւ Լատինաց Պատրիարքը Ջօզէֆ—Վալէրկայ, երեք օր միայն հիւանդ պառկելով: —20 ին առաւօտեան ժամը 5 ին օծման հանդէսը կատարեցաւ ուր ներկայ էին Հիւպատոսք և մեծ բազմութիւն. —21 ին առաւօտ կանուխ իրենց եկեղեցւոյն տակ թաղեցին. մինչև թաղման օրը իրենց զանգակները գուժարկու տխրութեամբ կը հնչէին և Հիւպատոսաց դրօշակներն կիսաւ բացուած էին. —22 ին Լատինաց միաբանութիւնը իրենց հանգուցեալ Պատրիարքին հոգւոյ հանգստեան համար Ս. Յարութեան տաճարը պատարագ մատուցին.

—Կ՚իմանամք թէ Դամասկոսի ժողովուրդը իւր Պատրիարքը պաշտօնէն ձգել կուզէ, Գուլղարայ բանադրանքին կամակից լինելուն համար:

—Բաղդադի Յունաց Պատրիարքն մէկ քանի պայմաններ առաջարկած է ՚ի նպաստ իրենց տեղացի ժողովրդեան, բայց թէ քանի հատ են և թէ ինչ են դեռ ստոյգ չիմացանք:

digitised by A.R.A.R.@